Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ

Հարցեր 1-25	*50 միավոր*
Խնդիր 1 *Բաժին Ա.* *Բաժին Բ.*	 *16 միավոր* *6 միավոր*
Խնդիր 2 *Բաժին Ա.* *Բաժին Բ*	 *10 միավոր* *5 միավոր*
Խնդիր 3	*8 միավոր*
Խնդիր 4	*5 միավոր*
Ընդամենը	*100 միավոր*

Հուլիս, 2025թ.

Բազմակի ընտրության 25 հարց: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր: Ընդամենը 50 միավոր:

1. Գալուստը, Ալենը և Աննան ընկերակցության անդամներ են, որոնք իրենց շահույթը բաժանում են 3:1:2 հարաբերակցությամբ:

   2024թ.-ի ապրիլի 30-ին Ալենը դուրս է եկել ընկերակցությունից, որից հետո շահույթի բաշխման հարաբերակցությունը Գալուստի և Աննայի միջև կազմել է 4:3: Ընկերակցությունը 2023-24թթ.հաշվետու տարվա ընթացքում ստացել է 1,500 հազ.դրամի զուտ շահույթ, որը տարվա ընթացքում համաչափ է ձևավորվել:

   Ընկերակցության հաշվետու տարին ավարտվում է 2024թ.-ի հոկտեմբերի 31-ին:

Որքա՞ն է Աննայի մասնաբաժինը ընկերակցության վերը նշված ստացված շահույթում՝ արտահայտված դրամներով .

Ա	571,428 դրամ
Բ	559,524 դրամ
Գ	250,000 դրամ
Դ	583,333 դրամ

2. Ստորև ներկայացված է կազմակերպության հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններից քաղվածք.

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.
Շենք՝ համախառն հաշեկշռային արժեք՝ 105,250,000
Կուտակված մաշվածություն՝ 19,000,000
2024թ.-ի հունվարի 31-ին շենքը վերագնահատվել է 106,900,000: Շենքի մաշվածությունը հաշվարկվում է տարեկան 5% տոկոսադրույքով, գծային մեթոդով:

Որքան կկազմի շենքի վերագնահատումից հետո արժեքի աճը,որը պետք է արտացոլվի 2024թ. այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ արտահայտված դրամներով :

Ա	20,650,000
Բ	10,125,000
Գ	19,985,858
Դ	31,613,542

3. Համաձայն «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ՝

Ա) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել,
Բ) առկա փորձագետի կողմից գնահատման եզրակացություն,ըստ որի հետազոտության ծախսերը ավարտված են,
Գ) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար,
Դ) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն,

Ա	Բոլորը ճիշտ են
Բ	Ա և Բ
Գ	Ա և Գ
Դ	Ա և Դ

4. ՀՀՄՍ 37-ը սահմանում է, որ պահուստը պետք է ճանաչվի որպես պարտավորություն ֆինանսական հաշվետվություններում, երբ՝

Ա) պարտականությունը հնարավոր չէ արժանահավատորեն չափել.
Բ) հավանական է, որ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների փոխանցում.
Գ) ճանաչվում է, անկախ նրանից, թե այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսք, թե ոչ.
Դ) կազմակերպությունը ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալի դեպքի արդյունք.

Ա	Ա,Բ,Դ
Բ	Ա և Գ
Գ	Ա և Դ
Դ	Բոլորն սխալ են

5. 2024թ.-ի դեկտեմբերի 31 -ին ավարտվող հաշվետու տարվա դրությամբ ԱԲԳ ընկերության ցուցանիշները ներկայացված են ստորև:Հայտնի է, որ նշված ընկերությունը հաշվետու տարում աշխատել է հատուկ հարկային համակարգում և իրացումից անուղղակի հարկերի հաշվարկ չի իրականացրել:

Պաշարների սկզբնական մնացորդը առ 01.01.24թ ՝ 116 մլն դրամ:
Պաշարների վերջնական մնացորդը՝ առ 31.12.24թ՝ 98 մլն դրամ :
Համախառն իրացումից հասույթը 2024թ՝ 405 մլն դրամ:
Պաշարները վաճառվել են 15% հավելագնով:

Հաշվետու տարվա ընթացքում մատուցվել է վարձակալության ծառայություն,որից հասույթը կազմել է 19,75 մլն դրամ:Ներգրավված 15մլն վարկային միջոցների դիմաց տոկոսների ձևով ծախսը կազմել է 1,5 մլն դրամ:

Որքան է կազմել 2024թ. ընթացքում ձեռք բերված պաշարների արժեքը:

Ա	317
Բ	370,17
Գ	368,67
Դ	351,5

6. Առևտրային ընկերության տարեվերջի դրությամբ պաշարների մնացորդը արտահայտված ինքնարժեքով կազմել է 10.500.000 դրամ: Ակնկալվում է այդ պաշարները վաճառել 12.000.000 դրամով՝ կատարելով իրացման հետ կապված 2.000.000 դրամի ծախսեր և դրանց պահպանման հետ կապված ծախսեր՝ 250.000 դրամ:

Ի՞նչ արժեքով պետք է տարեվերջին հաշվառվեն պաշարները Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ՝ համաձայն ՀՀՄՍ 2 Պաշարներ ստանդարտի:

Ա	10.500.000 դրամ
Բ	10.000.000 դրամ
Գ	8.250.000 դրամ
Դ	9.750.000 դրամ

7. **Նշված գործառնություններից որո՞նք են առաջացնում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների փոփոխություն**

1) Ընկերությունը իրականացրել է իր արտադրանքի ապառիկ վաճառք: Գնորդի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ պարտքը մարել 12 ամսից հետո:
2) Հաշվետու տարում առաջացել է հետաձգված հարկային ակտիվ:
3) Ընկերությունը ձեռք է բերել այլ կազմակերպության բաժնետոմսեր նույն ժամանակաշրջանում վաճառելու նպատակով:
4) Ընկերությունը 3 տարի ժամկետով փոխառություն է տրամադրում:

	Ընթացիկ ակտիվներ	Ոչ ընթացիկ ակտիվներ
Ա	2,3	1,4
Բ	3	1,2,4
Գ	1,2,3	2,3
Դ	3	4

8. 2024թ հաշվետու տարվա ֆին. արդյունքի մասին հաշետվության մեջ համախառն շահույթը մինչև շահութահարկը կազմել է 21 մլն դրամ, շահութահարկի ծախսը 4 մլն դրամ է, իսկ շահութահարկի դրույքաչափը 18%: Նույն տարում վճարվել է 10 մլն դրամ շահաբաժին: 2025թ-ի մայիսին հայտարարվել է շահաբաժնի բաշխում 5 մլն դրամի չափով: Ինչքան է փոխոխվել 2024թ սեփական կապիտալը նշված գործառնությունների հաշվապահական ձևակերպումներից հետո:

Ա	17մլն
Բ	7մլն
Գ	12մլն
Դ	2մլն

9. **Հետևյալ դրույթներից որո՞նք են համապատասխանում «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի պահանջներին**

Ա) Ներստեղծված ապրանքանիշերը, խորագրերը, հրապարակումների անվանումները, հաճախորդների ցուցակները և այլ էությամբ նմանատիպ միավորները պետք է ճանաչվեն որպես ոչ նյութական ակտիվներ:

Բ) Հետազոտության ծախսումները պետք է ճանաչվեն որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին կամ կապիտալացվեն՝ համաձայն ընկերության հաշվապահական քաղաքականության

Գ) Կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվություններում պետք է բացահայտի ժամանակաշրջանի ընթացքում որպես ծախս ճանաչված հետազտության և մշակման ծախսումների ընդհանուր գումարը:

Դ) Մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ կազմակերպությունը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ՝

1. ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար.

2. ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը.

3. ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը.

4. այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ: Ի թիվս այլոց, կազմակերպությունը պետք է ցուցադրի ոչ նյութական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ նյութական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործվելու է կազմակերպության ներսում, ապա ոչ նյութական ակտիվի օգտակարությունը.

5. մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը.

6. ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում արժանահավատորեն չափելու իր կարողությունը.

Ա	Ա, Բ,
Բ	Ա և Դ
Գ	Գ և Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

10. Ստորև նշվածներից, որո՞նք են Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներում սահմանված որպես հիմնարար որակական բնութագրեր

Ա) Տեղին լինելը և Ճշմարիտ ներկայացում

Բ) Հաշվենկատություն և Ճշմարիտ ներկայացում

Գ) Էականություն և հետևողականություն

Դ) Հետևողականություն և տեղին լինելը

11. Որքան է կազմում կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված որպես հիմնական միջոցներ ճանաչված սարքավորումների հաշվեկշռային արժեքը 31.12.2024թ.-ին, եթե հայտնի է, որ

- 31.12.2022թ.-ին դրանց համախառն հաշվեկշռային արժեքը կազմել է 104 մլն դրամ , կուտակված մաշվածությունը՝ 25 մլն դրամ,

- մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով,օգտակար գործողության ժամկետը 5 տարի է,մնացորդային արժեքը զրո:

- 2024թ.-ի մայիսի 25-ին ձեռք է բերվել 20 մլն ՀՀ դրամ արժեքով սարքավորում,որի տեղակայման վրա ծախսերը կազմել են 1,5 մլն ՀՀ դրամ,մինչև տեղակայման վայր հասցնելու հետ կապված ծախսերը 0,5 մլն ՀՀ դրամ, ներմուծման մաքսային վճարները 4 մլն ՀՀ դրամ, սարքավորումը մատչելի է եղել օգտագործման հուլիսի1-ին:Նախատեսվում է օգտագործել 5 տարի,մնացորդային արժեքը զրո է:

Ա	60,8 մլն դրամ
Բ	56,8 մլն դրամ:
Գ	63,4 մլն դրամ:
Դ	58,2 մլն դրամ

12. Ստորև նշված դեպքերից, որոնք են հանդիսանում ՀՀՄՍ 10 -ին համապատասխան՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող, սակայն ճշգրտման անհրաժեշտություն առաջացնող օրինակներ՝

Ա) Կեղծիքների կամ սխալների հայտնաբերումը ,որոնք վկայում են ,որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

Բ) Հաշվետու ժամանակաշրջանից հետո այնպիսի տեղեկատվության ստացումը, որը վկայում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ակտիվի արժեզրկված լինելու մասին (օրինակ, հաճախորդի սնանկացումը, որը տեղի է ունենում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, կամ պաշարների վաճառքը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո):

Գ) Դատական գործի կարգավորումը հաշվետու ժամանակաշրջանից հետո, որը հաստատում է, որ կազմակերպությունը ուներ ներկա պարտականություն հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Դ) Խոշոր արտադրական գործարանի ոչնչացում հրդեհի հետևանքով հաշվեկշռի ամսաթվից հետո:

Ե) Հաշվետու ժամանակաշրջանից հետո ակտիվների գների կամ արտարժույթի փոխարժեքների անսովոր խոշոր փոփոխությունները:

Ա	Ա,Բ,Գ
Բ	Բ,Գ,Դ
Գ	Ա,Ե
Դ	Բոլորն էլ ճիշտ են

13. Որ սահմանումն է բնորոշում ասոցիացված կազմակեպությանը՝

Ա) Ասոցիացված կազմակեպությունները համախմբվում են խմբի ֆինանսական հաշվետվություններում:

Բ) Ասոցիացված կազմակեպությունը կազմակերպություն է,որի նկատմամբ մայր կազմակեպությունը ունի հսկողություն:

Գ) Ասոցիացված կազմակեպությունը կազմակերպություն է,որի բաժնեմասը ցույց է տալիս մայր կազմակեպության հսկողության տակ գտնվող ակտիվների և պարտավորությունների գումարը,որոնք սակայն չեն պատկանում մայր կազմակերպության հիմնադիրներին:

Դ) Ասոցիացված կազմակեպությունը կազմակերպություն է,որի նկատմամբ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն:

Ա	Ա
Բ	Բ և Դ
Գ	Գ և Դ
Դ	Դ

14. Համաձայն հիմնական միջոցներ ստանդարտ ՀՀՄՍ 16-ի՝ ստորև ներկայացված որ սահմանումը կամ սահմանումներն են ճիշտ,

Ա) Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Բ) Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

ա) առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար,

բ) և ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Գ) Եթե հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի:

Դ) Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ա	Ա ,Բ,Դ
Բ	Բ և Գ
Գ	Ա,Բ,Գ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

15. Համաձայն ՀՀՄՍ 7-ի, այն է «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ստորև նշվածներից որոնք են բնորոշվում որպես ներդրումային գործունեություն ՝ արտադրությամբ զբաղվող կազմակերպության համար.

Ա) ռոյալթիներից, վարձավճարներից, միջնորդավճարներից և այլ հասույթներից ստացված դրամական միջոցների մուտքերը

Բ) դիլերային և առևտրային պայմանագրերից դրամական միջոցների մուտքերը և վճարումները.

Գ) դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար.

Դ) հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների ձեռքբերման համար դրամական վճարումները:Դրանք ներառում են սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցների և զարգացման աշխատանքների վրա կապիտալացված ծախսումների հետ կապված վճարումները.

Ե) այլ կազմակերպությունների բաժնային և պարտքային գործիքների ձեռքբերման, ինչպես նաև համատեղ ձեռնարկումների համար դրամական վճարումները (բացի այն գործիքների դիմաց վճարումներից, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ, կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրական նպատակներով).

Զ) Ստացված փոխառությունների՝ դրամական միջոցներով մարումները.

Է) այլ կողմերին տրամադրված փոխատվությունների վերադարձումից և վարկերի մարումից դրամական մուտքերը (բացի ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված փոխատվություններից և վարկերից).

Ը) հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների վաճառքից դրամական միջոցների մուտքերը.

Ա	Ա,Բ,Գ,Դ
Բ	Դ,Ե,Է,Ը
Գ	Ա,Բ,Զ.Ը
Դ	Բ,Գ,Դ,Զ

16. Ընկերության սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը. հազ.դրամ

1	Թողարկվել են բայթեր (իրավունքներ)	15.000
2	Կատարվել է բաժնետոմսի շահաբաժնային թողարկում	60.000
3	Մարվել է երկարաժամկետ վարկը	50.000
4	Թողարկվել են 12%-անոց պարտատոմսեր	20.000

Որքա՞ն կկազմեն Ֆինանսավորման գործունեությունից առաջացած դրամական հոսքերը «Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում» ՝

	հազ.դրամ
Ա	15.000 արտահոսք
Բ	75.000 ներհոսք
Գ	50.000 արտահոսք
Դ	20.000 ներհոսք

17. «Ֆինանսական հաշվետվությունների համախմբում»՝ ՖՀՄՍ 10-ի համաձայն,որ սահմանումը կամ սահմանումներն են բնութագրում չվերահսկվող բաժնեմասը և նրա կիրառությունը՝

Ա) Կազմակերպությունը պետք է վերագրի շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի յուրաքանչյուր բաղադրիչ մայր կազմակերպության սեփականատերերին և չվերահսկող բաժնեմասերին: Կազմակերպությունը պետք է նաև վերագրի ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքը մայր կազմակերպության սեփականատերերին և չվերահսկող բաժնեմասնակցություններին, նույնիսկ եթե դա հանգեցնի չվերահսկող բաժնեմասնակցություններում պակասորդային մնացորդի:

Բ) Դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության սեփականության բաժնեմասի փոփոխությունները, որոնք հանգեցնում են մայր կազմակերպության կողմից վերահսկողության կորստի, սեփական կապիտալի գործարքներ են (այսինքն, գործարքներ սեփականատերերի հետ, երբ վերջիններս հանդես են գալիս որպես սեփականատերեր):

Գ) Սեփական կապիտալը դուստր կազմակերպությունում, որը վերագրելի չէ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն մայր կազմակերպությանը,հանդիսանում է չհսկվող բաժնեմաս

Դ) Մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Ա	Ա Բ,Գ
Բ	Ա և Գ
Գ	Ա ,Գ,Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

18. **Ֆինանսական հաշվետվությունների համախմբման ժամանակ ստորև նշված որ ընթացակարգերն են կիրառվում՝**

Ա) Համախմբվում են մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների,պարտավորությունների,սեփական կապիտալի,եկամուտների,ծախսերի և դրամական հոսքերի հոդվածները:

Բ) Խումբը դիտարկել որպես մեկ կազմակերպություն:

Գ) Բացառել ներխմբային մնացորդները, ներխմբային ակտիվները ու պարտավորությունները,սեփական կապիտալը,եկամուտը,ծախսերը և դրամական միջոցները,որոնք վերաբերվում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին:

Դ) Բացառել ներխմբային առքուվաճառքները և չիրացված շահույթը:

Ա	Ա,Բ
Բ	Բ,Գ,
Գ	Գ,Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

19. Ստորև ներկայացրած կետերից որո՞նք են համապատասխանում ՖՀՄՍ-ների դրույթներին՝

1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչները չեն ներառում հիմնական միջոցների վերագնահատումից աճի փոփոխությունները:
2	Հոդվածների բացթողումները կամ ոչ ճիշտ ներկայացումները համարվում են էական, եթե դրանք՝ առանձին կամ միասին, կարող են ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
3	Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճն ուղղակիորեն պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքում որպես եկամուտ: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում որպես սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճ:
4	Պաշարների իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:
5	Հետընթաց կիրառումը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը նոր է կիրառվել:
6	Դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ա	1,2,3
Բ	2,4,
Գ	3,5
Դ	2,4,6

20. Ստորև նշված գործարքներից որոնք կարտացոլվեն Դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ՝

1	Բաժնետոմսի շահաբաժնային թողարկում
2	Ռայթերի (իրավունքների) թողարկում
3	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատում
4	Վճարված շահաբաժիններ

Ա	Բոլորը
Բ	1,3,4
Գ	2,4
Դ	1,4

21. 2024թ տարեսկզբի դրությամբ ՍԻԹԻ ընկերության պաշարների մնացորդը կազմում էր 190,000 հազար դրամ: Տարվա ընթացքում վաճառքից հասույթը կազմել էր 850,000 հազար դրամ, գնումները՝ 650,000 հազար դրամ, գնումների վերադարձը՝ 100,000 հազար դրամ: 20.12.2024 թ. պահեստում բռնկված հրդեհի հետևանքով պաշարների որոշ մասը այրվել են: Վնասված պաշարները կարող են վաճառվել 15,000 հազար դրամով: Հայտնի է, որ համախառն շահույթը սահմանվում է վաճառքի գնի 20%-ի չափով: Ապահովագրական ընկերությունը հատուցելու է վնասի 50%-ը:

Որքա՞ն կկազմի հրդեհի հետևանքով կազմակերպությանը պատճառած վնասը՝

Ա 22,500 հազար դրամ
Բ 15,000 հազար դրամ
Գ 45,000 հազար դրամ
Դ 30,000 հազար դրամ

22. Ներկայացված է առևտրային ընկերության կրեդիտորական պարտքերի մնացորդը առ 31.12.2023թ.-ին կազմել է 110 մլն դրամ:

2024թ.-ին ապրանքների ձեռքբերման արժեքը կազմել է 280 մլն դրամ, իսկ ստացված ծառայություններինը՝ 15 մլն դրամ ՝ այդ թվում ԱԱՀ 20%:Տարվա ընթացքում գնումներից 5մլն-ի ապրանքներ վերադարձվել են մատակարարարներին:

2024-ի ընթացքում կազմակերպության անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստաֆոնդը ավելացել է 3 մլն-ով:

Ընկերությունը 2024թ ընթացքում ստացել է 2մլն դրամի չափով զեղչ՝ իր պարտավորությունը ժամանակից շուտ մարելու դիմաց: 2024թ ընթացքում կատարել է վճարումներ ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց 240 մլն դրամ: Փոխադարձ հաշվարկների ակտով կատարվել է դեբիտորական պարտքի հետ հաշվանցում 1 մլն չափով նույն գործընկերոջ նկատմամբ կրեդիտորական պարտքից: 2024թ տարեվերջին կատարվել է 31.12.2023թ կրեդիտորական պարտավորության մնացորդի մեջ արդեն իսկ ներառված արտարժույթով արտահայտված պարտքի վերագնահատում,որի արդյունքում աճ է եղել 1,5մլն ՀՀ դրամի չափով:

Որքան է կազմել ընկերության առևտրային կրեդիտորական պարտքերի մնացորդը տարեվերջին՝ 31.12.2024թ-ին:

Ա	156 մլն դրամ
Բ	157 մլն դրամ:
Գ	158,5 մլն դրամ:

Դ	157,5 մլն դրամ

23. ՄԱՍԿ ընկերության ընթացիկ իրացվելիության գործակիցը կազմում է 1.5, արագ իրացվելիությանը ՝ 1.0, զուտ շրջանառու կապիտալը՝ 150,000 դրամ:

Որքան կկազմեն ընթացիկ պարտավորությունները:

Ա	75,000 դրամ
Բ	150,000 դրամ
Գ	300,000 դրամ
Դ	450,000 դրամ

24. Թրամփ ԱՁ-ն իրեն պատկանող տարածքները տալիս է վարձակալության: Վարձավճարները ստանում է կանխավճարի տեսքով հետևյալ օրերին՝ հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին և հոկտեմբերի 1-ին: Վարձակալությամբ տրված տարածքների տարեկան վարձավճարի համախառն գումարը 20,800 հազ.դրամ է: 2024թ. հուլիսի 1-ից կազմակերպությունը 12000 հազ. դրամ տարեկան վարձավճարով,ներառյալ ԱԱՀ, վարձակալության է տվել ևս մեկ տարածք վճարումների նույն ժամանակացույցով:Կազմակերպությունը ԱԱՀ վճարող է ,իսկ ԱԱՀ դրույքաչափը 20% է:

Որոշել տարածքների վարձավճարի գծով Թրամփ ԱՁ-ի ստացած եկամուտը 2024թ. հոկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար և ստացված կանխավճարի մնացորդը նույն ամսաթվի դրությամբ՝

	Ստացված Եկամուտ հազ.դրամ	Ստացված կանխավճար հազ.դրամ
Ա)	24800	5466,67
Բ)	20666,66	5466,67
Գ)	32800	8200
Դ)	24800	8200

25. Ստորև ներկայացրածներից որո՞նք են համապատասխանում ՀՀՄՍ-ների և ՖՀՄՍ-ների դրույթներին՝

Ա) Տարբեր աշխարհագրական տարածքներում պաշարների գտնվելը բավարար չէ ինքնարժեքի տարբեր բանաձևերի կիրառման համար:

Բ) Դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Գ) Կազմակերպությունը հիմնական միջոցի գծով սկզբնապես ճանաչված գումարը բաշխում է ըստ դրա նշանակալի մասերի և այդ յուրաքանչյուր մասի համար մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Դ) Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են ՝ որոնք

-առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար,

-ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Ա	Ա,Գ,Դ,
Բ	Բ,Գ,Դ,
Գ	Գ,Դ,
Դ	Բոլորն էլ ճիշտ են

Խնդիր 1 / Հաշվապահական ձևակերպումներ, ֆինանսական հաշվետվություններ/

«Տոտալ» ընկերության հաշվապահը կազմել է 2024թ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը: Աուդիտ իրականացվող ընկերությունը բացահայտել է, որ նշված հաշվետվությունը կազմված է թերություններով և ենթակա է ճշգրտման: Կից ներկայացված ծանոթագրություններում նշվել են ճգրտման ենթակա հոդվածները և նկարագրվել դրանց բովանդակությունը և առաջարկություն է կատարվել վերանայելու այն:

Բաժին Ա)

Պահանջվում է ներկայացնել ճշգրտվող հաշվապահական գործառնությունները և կազմել ճգրտված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝առ 31.12.2024թ դրությամբ:

(16 միավոր)

Պարտադիր չէ, որ հաշիվների համարները և անունները համապատասխանեն օրինակելի հաշվային պլանին: Կարևորը՝ հաշվի անվանման բովանդակությունը ճիշտ լինի, և հաշվային պլանի ընդհանուր կառուցվածքին համապատասխան լինի:

Կարող են օգտագործվել երկրորդ կարգի հաշիվները (ենթահաշիվները):

«Տոտալ» ընկ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ				
31 դեկտեմբերի 2024թ.				հազ. դրամ
	Ծանոթագրություն	2024 (Չստորագրված)	2023 (ստորագրված)	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ Այդ թվում՝ Շենք,շինություն Արտադրական սարքավորումներ Տրանսպորտային միջոցներ	 1,2,3 4 5	113300 73200 26900 13200	113300 73200 26900 13200	
Ոչ նյութական ակտիվներ	6,7	8060	5200	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		121360	118500	
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	8,9,10	23400	23400	
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	12,15	6960	8500	
Տրված կանխավճարներ		11100	0	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	54525	44525	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		95985	76425	
ՀԱՇՎԵԿՇԻՌ		217345	194225	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ				
Սեփական միջոցներ				
Բաժնետիրական կապիտալ		50	50	
Չբաշխված շահույթ	13	57675	60675	
Ընդամենը սեփական միջոցներ		57725	60725	
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	14	80000	40000	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		80000	40000	
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	14	8500	8500	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	8,15	18500	22500	
Ստացված կանխավճարներ		24000	8000	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	16	14000	45000	
Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով		1500	9500	
Այլ ընթացիկ պարտավորություններ		920	0	
Պարտքեր շահաբաժինների գծով		10000	0	
Օժանդակ հաշիվ		2200	0	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		79620	90500	

Ընդամենը պարտավորություններ		159420	133500	
Հաշվեկշիռ		217345	194225	

Ծանոթագրություններ:

1. Որպես հիմնական միջոց ճանաչված շենքի սկզբնական արժեքը 31.12.23թ կազմել է 81 մլն դրամ է, իսկ կուտակված մաշվածությունը՝ 7,8 մլն դրամ:
   Շենքի օգտակար ծառայության ժամկետը 40 տարի է, մաշվածության հաշվարկման մեթոդը՝ գծային-հավասարաչափ, մնացորդային արժեքը 25 մլն է:
2. 2024թ մարտի 10-ին ձեռք է բերվել նոր շինություն 37մլն 324,6 հազար սկզբնական արժեքով,որի օգտակար ծառ. ժամկետը կրկին 20 տարի է գնահատվել,մնացորդային արժեքը՝ 1մլն 324,6 հազար: Ձեռք բերման ձևակերպումները հաշվապահը կատարել է: Վերջինս մատչելի է եղել օգտագործման 01.04.2024թ ից:
3. 2024թ տարեսկզբին հաշվի առնելով անշարժ գույքի շուկայական արժեքների տատանումները, կազմակերպությունը որոշել է փոխել իր հաշվապահական քաղաքականությունը և կիրառել հիմնական միջոցների վերգնահատման մոդելը: Մարտի 1-ին կատարվել է շենքի վերագնահատում,որի արդյունքում արժեքը կազմել է 86 մլն դրամ,նոր օգտակար գործողության ժամկետը ևս 40 տարի է: Վերագնահատման հաշվապահական ձևակերպումներ չեն կատարվել:
   Բոլոր շենք - շինությունների 10% օգտագործվում է վարչական նպատակով , իսկ 80%-ը՝ իրացման նպատակով, 10% -ը ՝ ուղղակի արտադրական:
   Հաշվապահը 2024թ մաշվածքի ձևակերպում չի կատարել:
4. Արտադրական սարքավորումների համախառն հաշվեկշռային արժեքը առ 31.12.23թ դրությամբ կազմել է 26,9մլն, մնացորդային արժեքը զրո է, օգտակար ծառ. ժամկետը 5 տարի, մաշվածության հաշվարկման մեթոդը՝ գծային-հավասարաչափ:
5. Միակ տրանսպորտային միջոցը 2024թ մայիսի 31 ին օտարվել է 12մլն-ով , ներառյալ ԱԱՀ 20%: Կուտակված մաշվածքը օտարման պահին եղել է 4մլն դրամ, սկզբնական արժեքը՝ 15մլն: Վաճառքի դիմաց գումարը չի ստացվել հաշվետու տարում:
6. Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը առ 31.12.23թ դրությամբ կազմել է 5,6 մլն, մնացորդային արժեքը զրո է,ակնկալվում է տնտեսական օգուտներ ստանալ 10 տարիների ընթացքում:Ոչ նյութական ակտիվի մաշվածքը վերագրվում է վարչական ծախսերին:
7. 2024թ հունվարի 31ին ընկերությունը ձեռք է բերել կայք ,որը 2,86մլն սկզբնական արժեքով հաշվապահը ճանաչել է որպես ոչ նյութական ակտի , ակնկալվող օգտագործման ժամկետը 5 տարի, և մաշվածք չի հաշվարկել նշված տարում: Ստուգմամբ բացահայտվել է ,որ 2,86մլն արժեքի մեջ ներառված է եղել ընթացիկ սպասարկման ծառայության արժեք 860 հազար դրամի չափով:
8. 2024թ ընթացքում արտադրված արտադրանքը ամբողջությամբ իրացվել է:
   5 մլն պաշարների վերադարձը մատակարարին չի ձևակերպվել,որը հայտնաբերվել է տարեվերջին կատարված գույքագրման արդյունքում:
9. 2024թ տեղի է ունեցել պահեստի հրդեհ,որի պատճառով 9մլն ապրանքներ այրվել են:
10. 3մլն ինքնարժեքով պաշարների գնահատմամբ պարզվել է ,որ դրանք հաջորդ հաշվետու տարում իրացնելու համար կպահանջվի 1մլն առաքիչների աշխատավարձի գծով ծախս, իսկ շուկայում դրանց վաճառքի հնարավոր արժեքն է 2մլն:
11. 2025թ նախորդ տարվա ֆինանսական արդյունքի հիման վրա հայտարարվել է 5մլն դրամի չափով շահաբաժին և չի վճարվել:

12. Որոշում է կայացվել ձևավորելու դեբիտորական պարտքերի պահուստաֆոնդ՝ դեբիտորական պարտքի մնացորդի 2 % ի չափով:
13. Պահանջվում է ղեկավարությանը ներկայացնել Չբաշխված շահույթի հոդվածի ճշգրտումների մասով քաղվածքը կամ S հաշիվը:
14. Ստացված բանկային երկարաժամկետ վարկը 2024թ.ից սկսած նախատեսում է տարեկան 1մլն հաստատուն սպասարկման վճար,որը փաստացի վճարվում է յուրաքանչյուր տարվան հաջորդող 5 աշխ. օրերի ընթացքում, և տարեկան 5% տոկոսադրույք,որը վճարվում է բանկային փոխանցմամբ ամեն տարի 30.12-ին : Տոկոսային ծախսերի մասով հաշվապահը որևէ ձևակերպում չի կատարել:
15. Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության ղեկավարությունը կնքել է 5 մլն գումարի չափով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման ակտ,որը հաշվապահին չի ներկայացվել:
16. Հաշվապահը 2024թ. ֆինանսական արդյունքներով և հաշվապահական ձևակերպումներով հաշվեգրել է 12մլն շահութահարկ,որը տարեվերջին դեռ վճարված չի եղել:
17. 2024թ հաշվետվությունը հաշվեկշռվել է օճանդակ հաշվի կիրառմամբ,որը աուդիտորների կողմից բացահայտված ճշգրտումներից հետո անտեսվել է :

Բաժին Բ)

Պահանջվում է խորհրդատվությամբ աջակցել և ընկերության հաշվապահին ներկայացնել՝ համաձայն ՀՀՄՍ 38 –ի,այն է «Ոչ նյութական ակտիվներ», բացահայտման ենթակա տեղեկատվության պահանջները:Անհրաժեշտ է ներկայացնել առնվազն 6 ճիշտ պահանջ:

(6 միավոր)

Խնդիր 2.

Բաժին Ա : Դրամական հոսքեր

Ստորև բերված է «ԱՅԲ» ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (հազ. դրամ)

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	32,250	21,000
Ոչ նյութական ակտիվներ	21,750	5,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	54,000	26,000
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	8,250	6,900
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	5,120	8,700
Դրամական միջոցներ	1,750	3,250
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	15,120	18,850
Ընդամենը ակտիվներ	69,120	44,850
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	18,000	8,000
Էմիսիոն եկամուտ	3,000	3,000
Չբաշխված շահույթ	9,150	6,900
Ընդամենը սեփական կապիտալ	30,150	17,900
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Երկարաժամկետ վարկեր	15,000	14,300
Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	4,400	4,850
Պարտավորություններ բանկային տոկոսների գծով	2,500	2,508
Պարտավորություններ շահաբաժինների գծով	2,000	3,100
Պարտավորություններ շահութահարկի գծով	1,150	1,192
Ստացված կանխավճարներ	13,920	1,000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	23,970	12,650
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	69,120	44,850

Պատրաստել ընկերության «Դրամական հոսքերի մասին» հաշվետվությունը 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (անուղղակի մեթոդով) համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ հաշվի առնելով ստորև ներկայացված լրացուցիչ տեղեկությունները: (10 միավոր)

Լրացուցիչ տեղեկություններ՝

1. Նախորդ տարիներից փոխանցված հիմնական միջոցների կուտակված մաշվածության հաշվի 2024թ. սկզբնական մնացորդը 4,500 հազ. դրամ էր, իսկ տարեվերջի մնացորդը 6,500 հազ. դրամ:
2. 2024թ.ընթացքում ձեռք է բերվել սարքավորում 15,000 հազ. դրամ սկզզբնական արժեքով 20.04.2024թ-ին,որը մատչելի է դարձել օգտագործման 31.05.2024թ-ից: Տեղակայման և շահագործման պատրաստելու ծախսերը չեն կապիտալացվել:Որոշում է կայացվել շահագործել 5 տարի:
3. Ոչ նյութական ակտիվի ձեռք բերում տեղի է ունեցել 31.12.24թ-ին,իսկ ձեռք բերման արժեքը կազմել է 17,000 հազ դրամ, օգտակար գործողության ժամկետը 10 տարի: Ոչ նյութական ակտիվի օտարում հաշվետու տարվա ընթացքում տեղի չի ունեցել:
4. Կազմակերպության 2024 թ. զուտ շահույթը կազմել է 2,750 հազ. դրամ, ֆինանսական ծախսը՝ 500 հազ. դրամ,շահութահարկի գծով ծախսը՝ 494 հազ. դրամ:
   Շահութահարկի գծով առաջացող դրամական միջոցների հոսքերը պետք է բացահայտվեն առանձին և դասակարգվեն որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր, քանի որ դրանք չեն կարող կոնկրետ որոշակիացվել ֆինանսավորման կամ ներդրումային գործունեություններից որևէ մեկի հետ:
5. Տարվա ընթացքում հայտարարվել են 500 հազ. դրամի շահաբաժիններ,իսկ վճարված շահաբաժինները ներկայացվում են գործառնական գործունեության մեջ

Բաժին Բ : Գործակիցներ

Ստորև ներկայացված է վերլուծվող ԱՅԲ ընկերության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն:

	2023թ	2024թ
Հասույթ՝	54,500	68,865
Ինքնարժեք՝	49,707	61,505
Շահույթ մինչև հարկումը՝	1,354	
Շահութահարկ՝	250	

Պահանջվում է հաշվարկել ,համապատասխանաբար 2023թ և 2024թ համար, հետևյալ ցուցանիշները՝

- **կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին տևողությունը ,**
- **սեփական կապիտալի շահութաբերության գործակիցները ,**
- **ընթացիկ իրացվելիության գործակիցները,**
- **արագ իրացվելիության գործակիցները**
- **պաշարների շրջապտույտի տևողությունը՝**

Ցուցանիշները կարելի է ներկայացնել ամբողջական թվերով, ինչպես նաև ստորակետից հետո մեկ կամ երկու նիշով արտահայտված: (5 միավոր)

Խնդիր 3. ՀՀՄՍ –ների պահանջներ:

Նկարագրել կամ բնութագրել, թե ինչպիսի տեղեկատվություն է պետք բացահայտել ֆինանսական հաշվետվություններում համաձայն ՀՀՄՍ 2 -ի:

(8 միավոր)

Խնդիր 4. Համախմբված ֆինանսական հաշվետվություն:

«Խոշոր» ընկերությունը ձեռք է բերել «Միջին» ընկերության բաժնետոմսերի 70%-ը՝ վճարելով 1000.000 ՀՀ դրամ : Ձեռք բերման ամսաթվի դրությամբ՝ այն է 30.09.2024թ, «Միջին» ընկերության չբաշխված շահույթը կազմում էր 200.000 դրամ,իսկ կանոնադրական կապիտալը կազմել է 960.000 դրամ և փոփոխություն տեղի չի ունեցել մինչև 30.04.2025թ ներառյալ:

Միջին ընկերությունը 2024 թ. հունիսին ծառայություն է մատուցել «Խոշոր» ընկերությանը 150000 դրամի, որի դիմաց դեռ վճարում չի կատարվել:

Գուդվիլը արժեզրկվել է 25%-ով:

Ստորև ներկայացված են 30.04.2025 թվականի դրությամբ 2 ընկերությունների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները.

	«Խոշոր» ընկ. Հազ.դրամ	«Միջին» ընկ. Հազ.դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	4.400	700
Ներդրումներ	1.200	-
Ոչ նյութական ակտիվներ	2.000	400
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	7.600	1.100
Ընթացիկ ակտիվներ		
Դրամական միջոցներ	1.450	250
Դեբիտորական պարտքեր	3.850	890
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	5.300	1.140
Ընդամենը ակտիվներ	12.900	2.240
Կանոնադրական կապիտալ	2.500	960
Չբաշխված շահույթ	1.500	220
Ընդամենը կապիտալ	4.000	1.180
Ոչ ընթացիկ պարտավորություններ	6.400	555
Կրեդիտորական պարտքեր	2.500	505
Ընդամենը պարտավորություններ	8.900	1.060
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	12.900	2.240

Պահանջվում է կազմել «Խոշոր» և «Միջին» ընկերությունների համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 30.04.2025թ. դրությամբ, կատարելով համապատասխան հաշվարկները: (5 միավոր)